ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 02/23
«ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ՌԻՍԿԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՈՒՄ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ)
2023 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 3-ԻՆ ԺԱՄԸ 12:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

ք. Երևան

Նիստը նախագահում էր՝

Արթուր Մարտիրոսյան	-	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ (հանձնաժողովի նախագահ),

Մասնակցում էին՝

Զարա Ասլանյան	-	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության պետ (հանձնաժողովի անդամ),
Արմենուհի Պետրոսյան	-	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության գլխավոր մասնագետ (հանձնաժողովի անդամ),
Անահիտ Մուրադյան	-	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հանրակրթության վարչության արտադպրոցական և հանրակրթական ծրագրերի մշակման և իրականացման բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի անդամ),
Անուշ Մխիթարյան	-	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության ավագ մասնագետ (Հանձնաժողովի քարտուղար):

Օրակարգային հարցեր

1. Դրամաշնորհային մրցույթին դիմած հայտերի բացում:
2. Հաջորդ նիստի օրվա, ժամի և վայրի հաստատում:

Ա. Մարտիրոսյանը հայտարարեց նիստը բացված:

1) Օրակարգի 1-ին հարց

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ԵՔ-ԴՄ-ԹԻ 03/23 ծածկագրով դրամաշնորհային մրցույթի ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Մասնակիցների հասցեներ	Մասնակիցների էլ. հասցեները	Մասնակիցների հեռախոսահամարներ	Մասնակիցների առաջարկած գինը հազար /ՀՀ դրամ/
1	«Առավոտ» բարեգործական ՀԿ	ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր Թատերական 8/2-1-4	aravott@mail.ru	+374 77499077	2.295.000
2	«Դեմոկրատիան այսօր» ՀԿ	ՀՀ ք. Երևան, Դեմրճյան 40, բն. 144	info@democracytoday.am	+37477879861	2.582.400

Հանձնաժողովը ուսումնասիրեց ստացված հայտերը և նկատեց, որ «Դեմոկրատիան այսօր» ՀԿ-ի կողմից ներկայացրած փաստաթղթերի ՝ ֆինանսական նախահաշվում ԱԱՀ-ի տողը լրացված չէ ինչպես նաև ծրագրի համար մատուցվող ծառայությունների գնային առաջարկները բացակայուում են, իսկ «Առավոտ» բարեգործական ՀԿ-ի կողմից ներկայացված փաթեթում բացակայում է կազմակերպության կանոնադրությունը ինչպես նաև ներկայացված գնային առաջարկները թերի են:

Օրակարգային 1-ին հարցի քննարկումից հետո Հանձնաժողովը որոշեց.

Հանձնարարել հանձնաժողովի քարտուղարին դիմել «Դեմոկրատիան այսօր» ՀԿ-ին 1 աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկել շտկված հավելված 2-ը՝ ԱԱՀ-ի տողը լրացված և ծրագրի համար մատուցվող ծառայությունների գնային առաջարկները, իսկ «Առավոտ» բարեգործական ՀԿ-ին 1 աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկել կազմակերպության կանոնադրությունը և թերի գնային առաջարկները:

2) Օրակարգային 2-րդ հարց

Օրակարգի 2-րդ հարցի քննարկումից հետո քվեարկության արդյունքում որոշվեց.

Հանձնաժողովի հաջորդ նիստի օրը սահմանել ս.թ. փետրվարի 8-ը, ժամը 10:30, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 605 սենյակում, հասցե՝ Վազգեն Սարգսյան 3:

«ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ՌԻՍԿԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՈՒՄ»
ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ
ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ